ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 12 >> փետրվարի 2016 թվականի N: 27-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի N:2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության <<Սոցիալական աջակցության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին>> 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման 11-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016 թվականի փետրվարի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> N 58-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունվարի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2016 թվականի հաստիքացուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի հունվարի 12-ի N 1-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N:2-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է: